ԿԱՐԾԻՔ

Երևանի պետական համալսարանի հայցորդ Սևակ Արթուրի Պողոսյանի <<Հանցակիցների քրեական պատասխանատվության առանձնահատկությունները>> վերտառությամբ ատենախոսության վերաբերյալ

Հանցակցության ինստիտուտն ամենակարևորներից ու բարդերից մեկն է քրեական իրավունքի տեսությունում: Հանցավոր գործունեությունը, ինչպես և մարդու ցանկացած գործունեություն, կարող է իրականացվել ինչպես միայնակ, այնպես էլ անձանց խմբի և նույնիսկ ճյուղավորված գործունեություն իրականացնող մարդկանց որոշակի կազմավորումների կողմից, որոնք օժտված են հանցավոր <<իրավունքներով ու պարտականություններով>> և ունեն աստիճանակարգված ղեկավարում:

Իրավակիրառ պրակտիկան ցույց է տալիս, որ հանցակցությամբ բավական մեծ թվով հանցագործություններ են կատարվում, ընդ որում՝ առավել ծանր ու վտանգավոր հանցանքները կատարվում են խմբով, որը, կարծես թե, ապահովում է կատարողի գործողությունները մինչև վերջ հասցնելու գործընթացը: Ուստի բնական է, որ վտանգավորության տեսանկյունից օրենսդրության մեջ մեծ տեղ է տրվում հանցակցությանը:

Նման պարագայում, ընտրված թեմայի ուսումնասիրության անհրաժեշտությունը, կարևորությունը, հրատապությունն ու արդիականությունը կասկած չի հարուցում: Ընդ որում, թեմայի արդիականությունն առավելապես ընդգծվում է ներկայում տեղի ունեցած դատաիրավական բարեփոխումների, մասնավորապես՝ ՀՀ քրեական նոր օրենսգրքի ընդունման լույսի ներքո, քանի որ աշխատանքով տեսական ուսումնասիրության է ենթարկվել հանցակիցների քրեական պատասխանատվության ինստիտուտը և վեր է հանվել դրա մի շարք առանձնահատկություններ, որոնք կարող են օգտակար լինել ինչպես քրեաիրավական որակման, այնպես էլ՝ հետագա օրենսդրական փոփոխությունների իրականացման ժամանակ:

Աշխատանքը կառուցված է տրամաբանական հաջորդականությամբ. այն բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, տասներկու ենթագլուխներից,

եզրակացությունից, օգտագործված գրականության, նորմատիվ իրավական ակտերի և պրակտիկ նյութերի ցանկից: Ներածությունում հեղինակի կողմից շարադրվում է ընտրված թեմայի հրատապությունը, ներկայացվում են ուսումնասիրության նպատակն ու խնդիրները, հետազոտության օբյեկտն ու առարկան, ուսումնասիրության մեթոդաբանական, տեսական և նորմատիվ հիմքերը, ատենախոսության գիտական նորույթն ու կատարված ուսումնասիրության արդյունքների տեսական և գործնական նշանակությունը, ինչպես նաև ներկայացվել է պաշտպանության ներկայացվող դրույթները:

Առաջին գլխում՝ <<Հանցակցության հատկանիշները, հանցակիցների տեսակները, դրանց օրենսդրական բնորոշման և պատասխանատվության առանձնահատկությունները>> հեղինակը քննարկում է այս ինստիտուտի հասկացությունը և հատկանիշները, հանցակիցների հասկացության և պատասխանատվության հիմնախնդիրները, դրանց տեսակները, ինչպես նաև՝ օրենսդրական բնորոշման կատարելագործման հարցերը:

Հեղինակի կողմից նշվել է, որ քննարկվող թեմաների շուրջ մի շարք առանձնահատկությունների վերաբերյալ գիտնականների շրջանում, ըստ էության, առկա չէ ձևավորված միասնական կարծիք, այնուամենայնիվ, շատ գովելի է, որ որոշ կարգավորումների վերաբերյալ հեղինակի կողմից փորձ է կատարվել ներկայացնել իր իսկ տարբերակը:

Աշխատանքի երկրորդ գլխում հեղինակը հանգամանալից ներկայացրել է հանցակցության ձևերի դասակարգումը և հանցագործությունների որակումը հանցակցության տարբերի ձևերի դեպքում: Այստեղ ևս հեղինակի կողմից ցուցաբերվել է ինքնուրույն մոտեցման, իր իսկ տեսակետի արտահայտման և որոշակի լուծումներ առաջարկելու օրինակներ:

Աշխատանքի երրորդ գլխում ներկայացվել է չհաջողված հանցակցության, հանցակիցների սահմանազանցման և կամովին հրաժարման դեպքերում քրեական պատասխանատվության հարցերը, դրանց առանձնահատկությունները և առկա խնդիրները: Բացի այդ, խոսվել է նաև շարունակվող հանցագործություններում և հատուկ սուբյեկտի դեպքերում հանցակցության խնդիրների մասին:

Պետք է նշել, որ իր տեսակով բարդ թեմայի ընտրված լինելու պայմաններում՝

հեղինակին հաջողվել է ինքնուրույն, խորը, բովանդակալից աշխատանք ներկայացնել, ինչի արդյունքում էլ հստակեցումներ մտցնել և նաև արժեքավոր առաջարկներ կատարել մի շարք խնդրահարույց իրավիճակների շուրջ: Ընդ որում, հեղինակի կողմից առաջ քաշված թեմաների շուրջ ուսումնասիրությունը կատարվել է ինչպես ՀՀ քրեական օրենսգրքի գործող, այնպես էլ նոր ընդունված օրենսգրքի համատեքստում:

Աշխատանքի վերաբերյալ առկա են նաև որոշ դիտողություններ, մասնավորապես՝

1. Աշխատության 11-րդ էջում ներկայացվում է (ըստ Ռ.Ռ. Գալիակբարովի) խմբակային բռնաբարության օրինակ: Մասնավորապես՝ բռնաբարությունը կատարվում է երկու անձի կողմից, որոնցից մեկը բռնություն է գործադրում, իսկ մյուսը սեռական հարաբերություն է ունենում: Ընդ որում, սեռական հարաբերություն ունեցողը հասել է քրեական պատասխանատվության տարիքի, իսկ բռնություն գործադրողը՝ ոչ:

Այնուհետև՝ հեղինակը, անդրադառնալով խմբակային բռնաբարության նման օրինակին, նշում է, որ սեռական հարաբերությունը բռնաբարության հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշն է: Կատարող է համարվում նաև այն անձը, որն իրականացնում է օբյեկտիվ կողմի մի մասը: Ընդ որում, հեղինակի կարծիքով՝ հանցագործության օբյեկտիվ կողմի մի մասն անձը կարող է իրականացնել՝ օգտվելով այլոց արարքներից, որոնք նպաստավոր պայմաններ են ստեղծում իր կողմից այն կատարելու համար: Իսկ այլոք, որոնց արարքներից օգտվում է անձը, կարող է և հանցագործության սուբյեկտ չլինել:

Բերված օրինակում ցանկալի կլիներ լսել հեղինակի մոտեցումն այն իրավիճակի շուրջ, երբ օրինակ՝ հանցագործության սուբյեկտ հանդիսացող անձը բռնաբարության պրոցեսում միայն բռնություն է գործադրում, այսինքն՝ սեռական հարաբերություն չի ունենում, իսկ սուբյեկտ չհանդիսացող անձը սեռական հարաբերություն է ունենում: Այս դեպքում սուբյեկտ հանդիսացող անձի արարքը բռնաբարություն կարող է որակվել, թե ոչ՝ հատկապես ելնելով հեղինակի այն մտքից, որ հանցագործության օբյեկտիվ կողմի մի մասն անձը կարող է իրականացնել՝ օգտվելով այլոց արարքներից:

2. Աշխատանքի 33-րդ էջում տեսակետ է արտահայտվել, որ երբ օգտագործողը կարծում է, թե օգտագործվողը հանցագործության սուբյեկտ չէ, բայց հետագայում՝ հանցագործությունից հետո, պարզվում է, որ օգտագործվողն օժտված էր սուբյեկտի հատկանիշներով, ապա օգտագործողի արարքը պետք է որակվի որպես ավարտված

հանցանքի կատարում՝ ըստ իր դիտավորության ուղղվածության:

Գտնում ենք, որ վերը նշված տարբերակում կարելի էր քննարկումը մի փոքր խորն իրականացնել և փորձել տալ այն հարցի պատասխանը, թե այդ դեպքում ինչպես պետք է որակվի հենց օգտագործվողի արարքը, եթե վերջինն ինքն է իրականացրել հանցագործության օբյեկտիվ կողմը և պարզվել է, որ հանդիսանում է սուբյեկտ: Այսինքն՝ միգուցե դիտարկվեր այն տարբերակը, որ օգտագործողը տվյալ դեպքում հանդիսացել է դրդիչ, իսկ օգտագործվողը՝ կատարող, քանի որ միջնորդավորված կատարողի մասին կարելի է խոսել, երբ բուն օբյեկտիվ կողմն իրականացնողը (տվյալ դեպքում՝ օգտագործվողը) սուբյեկտի հատկանիշներով օժտված չլիներ:

3. Ատենախոսության 5–րդ ենթագլխում հեղինակը մանրամասն ներկայացրել է հանցակիցներից օժանդակողի հասկացությունը, դրսևորման ձևերը և այլն:

Սակայն աշխատանքը շատ ավելի խորքային կլիներ, երբ քննարկումն իրականացվեր տեսական գրականությունում և պրակտիկայում առկա մի տարածված խնդրի շուրջ: Մասնավորապես՝ խոսքը վերաբերում է կատարող (համակատարող) և օժանդակող գործողությունների սահմանազծման հստակեցման մասին: Այսպես՝ հիմնական դժվարությունը կայանում է նրանում, երբ դեպքի վայրում գտնվում են երկու հանցակիցներ, որոնցից մեկը կոնկրետ կատարում է բուն օբյեկտիվ կողմի հիմնական գործողությունները, իսկ մյուսն օգնում է կատարողին: Տարածված օրինակ է՝ գողության ժամանակ գողոնը տեղափոխելը, բնակարանի դուռը բացելը, պահակ (աթանդա) կանգնելը և այլն:

Այս դեպքում լինում են տեսակետներ, այդ թվում նաև պրակտիկայում կարող են որակումներ ստանալ, որ վերը նշված գործողությունները համակատարում են, այլ ոչ թե օժանդակություն, քանի որ դուռը բացելը, ապրանքը տանից տեղափոխելը և այլն հնարավոր է դիտարկվի օբյեկտիվ կողմի գործողություններ:

Այնուհանդերձ, իմ կարծիքով նշված թերությունները չեն նսեմացնում կատարված աշխատանքի արժանիքները:

Սնակ Արթուրի Պողոսյանի <<Հանցակիցների քրեական պատասխանատվության առանձնահատկությունները>> վերտառությամբ ատենախոսությունը բավարարում է ՀՀ ԲՈՒՀ-ի կողմից թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող պահանջներին, իսկ նրա հեղինակն արժանի է ԺԲ.00.05 Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի իր կողմից հայցվող գիտական աստիճանին:

Ատենախոսության սեղմագիրն արտացոլում է ատենախոսության հիմնական բովանդակությունը:

Գրախոսող

ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի ասիստենտ,

իրավաբանական գիտությունների թեկնածու Ա.Հ.Հովհաննիսյան

Քրեական իրավունքի ամբիոնի ասիստենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու Ա.Հովհաննիսյանի ստորագրությունը հաստատում եմ:

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դեկանի տեղակալ,

իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հ.Մ.Խաչիկյան

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ
ЮРИДИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ
FACULITY OF LAW